german cooperation
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Co-funded by the European Union

Implemented by giz

ngo center

SRD

Strengthening Civil Society in the Eastern Partnership

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հասարակական կազմակերպություն

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի 7 միավորված համայնքների ՏԻՄ-ի
2022-2023 թվականների
կատարած աշխատանքների
համապատասխանությունը
Տեղական ինքնակառավարման մասին
ՀՀ օրենքի պահանջներին

ԱՐՄԱՎԻՐ **2024**թ.

«Աջակցություն բաց, հաշվետու և մասնակցային կառավարմանը» ծրագիրն իրականացվում է «Տարածաշրջանի կայուն զարգացում» ՀԿ-ի կողմից՝ «ՀԿ Կենտրոն» ՔՀԶ ՀԿ-ի *CSOs4SLD* ծրագրի շրջանակներում տրված փոքր դրամաշնորհով՝ «Քաղաքացիական հասարակության հզորացում ԱլԳ երկրներում» ծրագրի ներքո, որը ֆինանսավորվում է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության *(ԵՄ)* կողմից:

Սույն հետազոտությունը պատրաստվել է Գերմանիայի կառավարության և ԵՄ ֆինանսական աջակցությամբ՝ «Քաղաքացիական հասարակության հզորացում ԱլԳ երկրներում» ծրագրի շրջանակներում իրականացվող *CSOs4SLD* ծրագրի համատեքստում: Բովանդակությունը բացառապես «Տարածաշրջանի կայուն զարգացում» ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Գերմանիայի Դաշնային Հանրապետության, ԵՄ կառավարության կամ ՀԿ Կենտրոնի տեսակետները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի, տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:

Քաղաքականացված ավագանու նիստերը ձևական բնույթ են կրում: Բնակիչները, չունենալով նվազագույն իրազեկվածություն, անտեղյակ են համայնքի ՏԻՄ աշխատանքներից:

«Տարածաշրջանի կայուն զարգացում» ՀԿ-ն 2024թ. փետրվար ամսին իրականացրեց ուսումնասիրություն Արմավիրի մարզի 7 միավորված համայնքների ՏԻՄ-ի 2022-2023թթ. կատարած աշխատանքների համապատասխանությունը ՀՀ Տարածքային կառավարման մասին օրենքի որոշ դրույթների պահանջներին:

Առաջին հերթին ուսումնասիրվել են ավագանու նստաշրջանները և նիստերը (62 հոդված):

Ուսումնասիրվել են Արմավիրի 7 միավորված համայնքների պաշտոնական ինտերնետային կայքերը, գումարված հերթական և արտահերթ նիստերի քանակը, կայացրած որոշումների քանակը և օրենքի պահանջով հերթական նիստերի քանակի պահպանումը:

Հաշվի առնելով այն աքսիոմատիկ ճշմարտությունը, որ տեղեկացված հասարակությունը միայն կարող է մասնակցել կամ կարծիք արտահայտել գործընթացների նկատմամբ, ուսումնասիրվել է ՏԻՄ աշխատանքների մասին բնակիչներին տեղեկացնելու օրենքի պահանջների կատարումը (15 և 62 հոդված):

Այդ նպատակով այցելել ենք բոլոր համայնքների համայնքի ղեկավարի և ավագանու նստավայր, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրեր: Ուսումնասիրվել են համայնքի պաշտոնական համացանցային կայքերը և հրապարակային ծանուցումների www.azdarar.am կայքը:

Ուսումնասիրվել են ավագանու նիստերի անցկացման վերաբերյալ ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի պահանջները, մասնավորապես՝ նիստի ընթացքում արձանագրությունների կազմման և հրապարակման, ավագանու մասնագիտական հանձնաժողովների աշխատանքի և ավագանու նիստերի հրապարակայնությունը ապահովող գործիքների կիրառման նկատմամբ

պահանջների բավարարումը: Այս նպատակով հիմնականում ուսումնասիրվել են Արմավիրի մարզի 7 միավորված համայնքների ինտերնետային պաշտոնական կայքերը:

Արմավիրի մարզի միավորված համայնքների ՏԻՄ-ի 2 տարվա կատարած աշխատանքների համապատասխանությունը Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի պահանջներին

Արմավիրի մարզում համայնքների միավորումը իրականացվեց տեղական ինքնակառավարման ընտրություններով, որը տեղի ունեցավ 2021 թվականի դեկտեմբերի 5-ին: Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի փոփոխությունների հեղինակները Համայնքների միավորումը համարում էին ՏԻՄ ոլորտի հեղափոխություն, որի շնորհիվ հնարավոր կլինի իրականացնել տարբեր ծավալի ծրագեր, որոնք տասնյակ տարիներ անհասանելի են եղել փոքր համայնքների համար: Մյուս ամենակրևոր փաստարկը օրենքի փոփոխությունների նախագծի հեղինակների մեկնաբանությամբ քաղաքական ավագանին էր, որտեղ բանավեճերի և քննարկումների արդյունքում կծնվեին այնպիսի գաղափարներ, որից կօգտվեին համայնքների բնակիչները:

Ընտրություններից հետո նորընտիր ավագանու աշխատանքները շատ էին պետք էր համայնքի ղեկավար նշանակել և հաստատել 2022 թվականի համայնքի տարեկան բյուջեն: 2022-ից արդեն հնարավոր կլիներ հետևել համայնքների ՏԻՄ աշխատանքները և հասկանալ, թե որքանով էին արդարացի համայնքների միավորման ջատագովները:

2024 թվականի սկզբին «Տարածաշրջանի կայուն զարգացում» հասարակական կազմակերպությունը ուսումնասիրեց Արմավիրի մարզի միավորված 7 համայնքների 2022, 2023 թվականներին կատարած գործառույթների համապատասխանությունը Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի պահանջներին:

Ուսումնասիրությունները կատարվել են Արմավիրի մարզի 7 միավորված համայնքների պաշտոնական համացանցային կայքերում, հրապարակային ծանուցումների www.azdarar.am կայքում, համայնքապետի և ավագանու նստավայրում, բնակավայրերի վարչական պատասխանատուների նստավայրերում և բնակավայրերի տարածքում:

	Համայնք	Բնակչության թվաքանակը	Բնակավայրերի թիվը	Ավագանու անդամների թիվը	Համայնքի ղեկավար 2022- 2023 թթ.
1	Մեծամոր	80284	31	27	Վահրամ Խաչատրյան
2	Արմավիր	65515	11	27	Դավիթ Խուդաթյան
3	Վաղարշապատ	62879	2	27	Դիանա Գասպարյան
4	Խոյ	31031	17	21	Արգիշտի Մեխակյան
5	Փարաքար	28740	9	21	Դավիթ Մինասյան
6	Արաքս	27934	13	21	Ղազար Ղազարյան
7	Բաղրամյան	19957	14	21	Շանթ Առաքելյան
		316340	97	165	

Ավագանու նիստերի կազմակերպում և անցկացում

Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35 հոդվածի 1-ին կետի առաջին ենթակետով Համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝ հրավիրում և վարում է ավագանու նիստերը՝ սույն օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով.

Նույն օրենքի 59 հոդվածով ավագանու աշխատանքների կազմակերպումը ներառված է համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների ցանկում:

Օրենքի պահանջով ավագանու նիստերի կազմակերպման և անցկացման պատասխանատվությունը կրում է համայնքի ղեկավարը:

Ավագանու հերթական նիստերը հրավիրվում են նստաշրջանների ընթացքում, ՏԻ օրենքի 62 հոդվածի համաձայն նստաշրջանները գումարվում են փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթին և սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին:

Հոդվածի տրամաբանությամբ համայնքի ղեկավարը տարվա 2 նստաշրջանների ընդացքում պետք է հրավիրի ավագանու հերթական 9 նիստ: Արմավիրի մարզի 7 միավորված համայնքներում 2022, 2023 թվականների ընթացքում ընդհանուր հաշվով պետք հրավիրված լիներ ավագանու 18 հերթական նիստ: Աղյուսակով ներկայացնենք թե ո՞րքանով է կատարվել օրենքի պահանջը:

Համայնք	Հրավիրված նիստեր			Ընդունած որոշումներ		
	Ընդամենը	Հերթական	Արտահերթ	Ընդամենը	Հերթական	Արտահերթ
Մեծամոր	28	18	10	449	317	132
Արմավիր	23	5	18	378	76	302
Վաղարշապատ	32	17	15	233	139	94
Խոյ	31	15	16	298	142	156
Փարաքար	33	14	19	470	170	300
Արաքս	31	15	16	424	249	175
Բաղրամյան	23	13	10	289	168	121
	201	97	104	2541	1261	1280

Աղյուսակում բերված թվերն ավելի խոսուն են, քան յուրաքանչյուր մեկնաբանություն: Մնում է հասկանալ Արմավիրի մարզի միավորված համայնքների ղեկավարների օրենքը շրջանցելու դրդապատճառները:



Հարկ է նշել, որ ԱԼՏ հեռուստախմբագրությունը դեռևս 2023 թվականի օգոստոսին Տարածքային կառավարման և ենթակառույցների նախարարությունից ստացել է հարցման պատասխան, ըստ որի արտահերթ

նիստը չի կարող փոխարինել հերթական նիստին: Տեղական ինքնակառավարման օրենքի 62 հոդվածի «Նստաշրջանի ընթացքում յուրաքանչյուր ամիս հրավիրում է ավագանու առնվազն մեկ նիստ» ձևակերպումը չի վերաբերում արտահերթ նիստին:



Իրազեկումը ավագանու նիստի մասին

Արմավիրի մարզի միավորված համայնքների ավագանու արտահերթ նիստերի առատության պաճառները հասկանալու համար տեսնենք համայնքների բնակիչները գոնե պատշաճ մակարդակով տեղեկացվել են ավագանու նիստերի անցկացման տեղին և ժամին, ինչը պահանջում են ՏԻ մասին օրենքի 15 և 63 հոդվածների: Ըստ այդմ՝

1.Ավագանու հերթական նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը:
Այդ տեղեկությունները՝

- փակցվում են համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում,
- տարածվում են զանգվածային լրատվության միջոցներով,
- փակցվում են համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում
- տեղադրվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում

- տեղադրվում են հրապարակային ծանուցումների www.azdarar.am կայքում

Փակցվում են համայնքի դեկավարի և ավագանու նստավայրում

Արմավիրի մարզի 7 միավորված համայնքների վարչական տարածքների տեսանելի վայրերի ուսումնասիրությամբ հասկացանք, որ օրենքի նշված դրույթները մարզին չեն վերաբերում:
Մասնավորապես Մեծամոր համայնքապետարանում հայտարարությունների վահանակ չկա և եթե վահանակ չկա ուրեմն կարելի է օրենքի պահանջը անտեսել:
Արմավիր համայնքապետարանում վահանակին փակցված էր ավագանու նիստերի հետ կապ չունեցող 2 ժամկետանց թերթիկ:
Վաղարշապատի համայնքապետարանում տեղեկատվական վահանակները ծանրաբեռնված էին տեղեկատվությամբ, սակայն ընդհանուր վահանակների տեսանելիության խնդիրը առկա էր:
Խոյ համայնքային կենտրոնում, որը տեղակայված է Գեղակերտ բնակավայրում, գոյություն չուներ տեղեկատվական վահանակ, նույն վիճակում էին Արաքս, Փարաքար և Բաղրամյան համայնքապետարանները:

Տարածվում են զանգվածային լրատվության միջոցներով

Արմավիրի մարզի 7 միավորված համայնքները ԶԼՄ-ների միջոցով բնակիչներին կայանալիք ավագանու նիստի տեղի և ժամի մասին տեղեկացնելու պրակտիկա չունեն:
Օրինակ մարզում գործող ԱԼՏ հեռուստախմբագրությունը նման պատվերներ չի ստացել, Հայրենականչ մարզային շաբաթաթերթում այդ մասին հայտարարություններ երբևէ չեն տպագրվել:

Փակցվում են համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում

Բնակավայրերի վահանակները ավելի շատ ծառայում են տարբեր բնույթի գովազդային թերթիկներ փակցնելու համար: Ավագանու նիստերի կամ նախագծերի վերաբերյալ ոչ մի փաստաթուղթ հնարավոր չեղավ գտնել:
Բնակավայրերը առանձին նշելու հարկ չի առաջանում և պարզ տրամաբանությամբ, եթե համայնքապետարանը չունի հայտարարությունների վահանակներ բնակավայրի տեղեկատվական վահանակների վերաբերյալ ակնարկելը ավելորդ է դառնում:

Տեղադրվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում

Բնակիչներին տեղեկատվություն տրամադրելու ամենադյուրին տարբերակը սեփական համացանցային կայքի միջոցով տեղեկատվություն տարածելն է:

Արմավիրի համայնքների ՏԻՄ-ում գերակշռում են արտահերթ նիստերը: Այս համատեքստում կրկին հիշեցնենք Տեղական ինքնակառավարման մասին օրենքում բնակչությանը տեղեկացնելու ժամկետները:

Համաձայն Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 17 հոդվածի 4-րդ կետի.

4. Արտահերթ նիստի օրակարգի ձևավորումը, արտահերթ նիստի մասին տեղեկացումն ու անցկացումն իրականացվում են հերթական նիստի համար սույն օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածի առանձնահատկությունները:

Հոդվածից ակնհայտ է դառնում, որ ավագանու հերթական և արտահերթ նիստերի դեպքում իրազեկման գործիքները և ժամկետները չեն փոխվում:
Ուսումնասիրության արդյունքներով 7 միավորված համայնքների ՏԻՄ-ը չեն շտապել տեղեկացնելու բնակիչներին կայանալիք նիստերի մասին:
Մասնավորապես

Մեծամոր համայնքում հայտարարություններ բաժնում կայանալիք նիստերի վերավերյալ գրառումներ չկան: Վերջին գրառումը կայանալիք նիստի վերաբերյալ կատարվել է 2020 թվականի փետրվարի 12-ին:

Վաղարշապատ համայնքում պաշտոնական կայքում առկա են ավագանու առաջիկա կայանալիք նիստի վերաբերյալ հայտարարությունները, սակայն հայտարարություններում չէր մանրամասնվում նիստերի օրակարգը և այն որոշումների նախագծերը, որոնք ներառված էին նիստի օրակարգում:

Վաղարշապատ համայնքի նիստերի վերաբերյալ հայտարարություններում խախտված են արտահերտ նիստերի մասին տեղեկատվության ժամկետները:

Արմավիր համայնքի համացանցային պաշտոնական կայքում ավագանու նիստերին առնչվող հայտարարություններ չկան: Փոխարենը նիստերի վերաբերյալ հիշատակումների կարելի է հանդիպել «Ավագանու ուղերձներ» բաժնում: Որի գոյության մասին բնակիչը կարող է միայն ենթադրություններով առաջնորդվելու արդյունքում տեղեկանալ: Հայտարարությունների ոչ լրիվ ցանկը, որը տեղադրված է պաշտոնական կայքում ոչ մի օրինաչափության չի տրվում: Տրվում է հայտարարություն նիստի անցկացման վերաբերյալ, որը պետք է կայանա 2 օր հետո:
Հարկ է նշել, որ 2022 թվականին նիստերի կայացման վերաբերյալ հայտարարությունները բացակայում են իսկ 2023 թվականին գերակշռում են արդեն կայացած նիստերի հայտարարություններ:
Հայտարարությունները ազդարարում են անցկացման օրվա մասին տեղեկատվություն, չկան նշումներ, թե ինչ հարցեր են քննարկվելու նիստի ընթացքում: Պարզ տրամաբանությամբ բնակիչը մինչև չտեղեկանա նիստի օրակարգին չի կարող ակտիվություն ցուցաբերել և մասնակցել ավագանու նիստին:

Խոյ համայնքի համացանցային կայքի հայտարարություններ բաժնում ավագանու նիստերին վերաբերող մեկ հայտարարություն կա, որ պետք է կայանա 2023թ-ի հոկտեմբերի 11-ին: Ավագանու նիստերի հետ կապված

մյուս հայտարարությունները տեղադրվել են 2023 թվականին «Ավագանու ուղերձներ» բաժնում, որոնք ազդարարում են, որ կայացել է ավագանու նիստ: Շարքային քաղաքացու համար թե որքան կարևոր է իմանալ կայացած ավագանու նիստի օրը, հայտնի է միայն հայտարարության հեղինակին: Տրամաբանական կլիներ, եթե կայացած նիստերի հայտարարությունների տեքստում ավելացվեր որոշումների մասին տեղեկատվություն:

Փարաքար համայնքի պաշտոնական կայքում որևէ հիշատակում չկա ավագանու նիստերի վերաբերյալ:

Արաքս համայնքապետարանի պաշտոնական կայքում 2022,2023 թվականների ուսումնասիրությամբ կարողացանք գտնել մեկ արտահերթ նիստի հայտարարություն, որտեղ կար օրակարգի նախագիծ, սակայն ժամկետը խախտված էր:

Բաղրամյան համայնքի համացանցային պաշտոնական կայքում ոչ մի հիշատակում չկա ավագանու նիստի անցկացման մասին:

<u>Տեղադրվում են հրապարակային ծանուցումների www.azdarar.am կայքում</u>

ՀՀ Պաշտոնական հայտարարությունների համացանցային կայքում կայանալիք ավագանու նիստերի հայտարարությունների առատություն չակ: Այստեղ ավելի դյուրին է թվարկել քանի հայտարարություն կա: Մասնավորապես կայքում հայտարարություններ տեղադրել է Վաղարշապատ համայնքը միայն 2023 թվականին, սակայն հայտարարությունները տեղադրված են առանց օրակարգի նախագծի և չեն պահպանվել արտահերթ նիստերի ժամկետները:

Մեկ արտահերթ նիստի հայտարարություն տեղադրել է Փարաքար համայնքապետարանը, նույնպես չապահովելով հայտարարության օրենքով նախատեսված պահանջները:

Մնացած համայնքապետարանները պաշտոնական հայտարարությունների կայքը օգտագործել են միայն թափուր աշխատատեղերի հայտարարությունների համար: Ավագանու նիստերի վերաբերյալ ոչ մի նախադասություն:

Նախորդիվ ներկայացված տվյալներով պատրաստենք 10 բալանոց գնահատականներով աղյուսակ, որտեղ պարզ կներկայացվի համայնքների աշխատանքի օրինականության մակարդակը:

	Համայնք	Ավագանու նստավայր	ԶԼՄ	Բնակա-վայրեր	Համայնքի պաշտոնակ. կայք	azdarar.am	Ընդամենը միջ.
1	Մեծամոր	0	0	0	0	0	0
2	Արմավիր	0	0	0	0	0	0
3	Վաղարշապատ	5	0	0	5	0	0.2
4	Խոյ	0	0	0	0	0	0
5	Փարաքար	0	0	0	0	0	0
6	Արաքս	0	0	0	0	0	0
7	Բաղրամյան	0	0	0	0	0	0

Ավագանու նիստեր

Ավագանու նիստերի անցկացման կարգի վերաբերյալ ուսումնասիրվել է 3 գործոնների առկայությունը: Մասնավորապես՝

Տեղական ինքնակառավարման մասին օրենք հոդված 61, 2-րդ մաս: Ավագանու նիստերն արձանագրվում են: Այդ արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում ենթակա են տեղադրման նաև համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

Սա նշանակում է նիստի քարտուղարը կազմում է նիստի ընթացքի վերաբերյալ արձանագրություն, որտեղ մանրամասն նշվում է ելույթները, պատասխանները և նիստի ընթացքի մնացած մանրամասները: Արձանագրությունը ընթերցելով համայնքի բնակիչը ամբողջական պատկերացում պետք է կազմի քննարկվող հարցերից, խմբակցությունների, կամ առանցին ավագանու անդամների մոտեցումները քննարկվող հարցերի մասին:

Արմավիրի մարզի 7 միավորված համայնքների պաշտոնական կայքերում տեղադրված չեն նիստերի արձանագրություններ: Լավագույն դեպքում արձանագրության անվան տակ տեղադրվում է ավագանու որոշումները:

Նույն օրենքի 14 հոդվածի 5-րդ կետի համաձայն ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող հարցերը պետք է նախապես քննարկվեն ավագանու իրավասու հանձնաժողովում: Քննարկման արդյունքում ձևավորված կարծիքը կցվում է ավագանու նիստի օրակարգի նյութերին:

Հոդվածի պահանջով որոշման նախագծի վերաբերյալ մասնագիտական կարծիքը ներկայացվում է ավագանու անդամներին, դրանից հետո միայն տեղի է ունենում քվեարկություն:

Արմավիրի մարզի 7 միավորված համայնքների ավագանու ընդունած որոշումներին մասնագիտական հանձնաժողովի կարծիք կցված չէ:

Օրենքի 16 հոդվածի 9-րդ կետի պահանջով ավագանու հրապարակային նիստերը առցանց հեռարձակվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում: Սա ևս մեկ գործիք է, որի միջոցով բնակիչները առանց մասնակցելու ավագանու նիստին կարող են ծանոթանալ նիստում քննարկված հարցերին և ավագանու անդամների դիրքորոշմանը հարցերի նկատմամբ:

Այս հոդվածի պահանջները կատարում են Վաղարշապատի, Արտաշատի և Փարաքարի համայնքապետարանները և մասամբ կատարում է Խոյի համայնքապետարանը: Մեծամորի, Արմավիրի և Բաղրամյանի համայնքապետարանները ավագանու նիստերի տեսագրություն չեն կատարել:

Ընդհանուր դիտարկումներ

Արմավիրի մարզի 7 միավորված համայնքների 2022-2023 թվականներին ընդունված որոշումների 50 տոկոսից ավելին ընդունվել է արտահերթ նիստերի արդյունքում, սակայն ոչ մի նախադասությամբ չի արդարացվում արտահերթ նիստի անհրաժեշտությունը:

Արտահերթ նիստը ենթադրում է սահմանափակ քանակի հարցերի քննարկում, ինչը Արմավիրի մարզի համայնքների արտահերթ նիստերի օրակարգում նկատելի չէ: Կարճ ժամանակահատվածում գումարվում է արտահերթ նիստ 20-22 հարցով, իսկ ժամանակ անց հերթական նիստ է գումարվում 4-5 հարցերով:

Արտահերթ գումարված ոչ մի նիստը չի սկսվել արտահերթ նիստի անհրաժեշտության մեկնաբանությամբ: Այս հանգամանքները համադրելով կարելի է մեկ եզրակացության գալ, որ արտահերթ նիստերը գումարվում են բնակիչներից գաղտնի որոշումներ կայացնելու նպատակով:

Արտահերթ նիստեր գումարելիս ոչ մի համայնքում չի պաշտպանվել բնակիչներին տեղեկացնելու ժամկետները: Հարկ է հիշեցնել, որ հերթական և արտահերթ նիստերի անցկացման պարագայում բնակիչներին տեղեկացնելու ժամկետների տարբերություն չի նախատեսվում: Արմավիրի մարզի բոլոր միավորված համայնքներում արտահերթ նիստի վերաբերյալ իրազեկման չափանիշ է ընտրվել 3 օրը, ինչի վերաբերյալ հիշատակում չկա օրենքում:

Արմավիրի մարզի 3 միավորված համայնքներ չունեն նիստի արձանագրություններ, չունեն մասնագիտական հանձնաժողովների կարծիքներ, չունեն ավագանու նիստի տեսագրություններ: Այս միավորված համայնքների բնակիչներին դժվար կլինի բացատրել, որ իրականում նիստեր կայացել են:

Արմավիրի մարզի միավորված համայնքներում տեղական ինքնակառավարումը գտնվում է զրոյական մակարդակում, այստեղ նույնիսկ ջանք չեն գործադրում գոնե թուղթ սևացնելով իրականացնել տեղական ինքնակառավարում:

Տեղական ինքնակառավարումը Արմավիրի մարզի 7 միավորված համայնքներից յուրաքանչյուրում:

Մեծամոր համայնքապետարան

Բնակչությունը ***80284***

Բնակավայրերի թիվը ***31***

Ավագանու անդամների թիվը ***27***

Համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյան

2022-2023թթ. ավագանու նիստերի քանակը 28, որից 10-ը արտահերթ

2022-2023թթ. ընդունված որոշումների քանակը 449, որից 132-ը արտահերթ նիստով:

Կայանալիք նիստերի վերաբերյալ մեկ իրազեկում կարողացանք գտնել, նիստերը չեն տեսագրվում, չեն արձանագրվում, ավագանու հանձնաժողովները անգործության են մատնված:

Արմավիր համայնքապետարան

Բնակչությունը ***65515***

Բնակավայրերի թիվը ***11***

Ավագանու անդամների թիվը ***27***

Համայնքի ղեկավար Դավիթ Խուդաթյան

2022-2023թթ. ավագանու նիստերի քանակը 23, որից 18-ը արտահերթ

2022-2023թթ. ընդունված որոշումների քանակը 378, որից 302-ը արտահերթ նիստով:

Կայանալիք նիստերի վերաբերյալ իրազեկում չի իրականացվում, նիստերը չեն տեսագրվում, չեն արձանագրվում, ավագանու հանձնաժողովները անգործության են մատնված:

Վաղարշապատ համայնքապետարան



Բնակչությունը - ***62879***

Բնակավայրերի թիվը - ***2***

Ավագանու անդամների թիվը - ***27***

Համայնքի ղեկավար՝ Դիանա Գասպարյան

2022-2023թթ. ավագանու նիստերի քանակը 32, որից 15-ը արտահերթ

2022-2023թթ. ընդունված որոշումների քանակը 233, որից 94-ը արտահերթ նիստով:

Կայանալիք ավագանու նիստերի վերաբերյալ իրազեկում տրվում է սեփական ինտերնետային կայքի և համայնքապետարանի շենքում փակցնելու միջոցով: Կայքում տեղադրված հայտարարություններում բացակայում են քննարկվող հարցերը և կից փաստաթղթերը: Նիստերը տեսագրվում են: Ավագանու նիստերը չեն արձանագրվում, ավագանու հանձնաժողովները անգործության են մատնված:

Խոյ համայնքապետարան

Բնակչությունը ***31031***

Բնակավայրերի թիվը ***17***

Ավագանու անդամների թիվը ***21***

Համայնքի ղեկավար Արգիշտի Մեխակյան

2022-2023թթ. ավագանու նիստերի քանակը 31, որից 16-ը արտահերթ

2022-2023թթ. ընդունված որոշումների քանակը 298, որից 156-ը արտահերթ նիստով:

Կայանալիք նիստերի վերաբերյալ բնակչությանը չի իրազեկվում, նիստերը մասնակի են տեսագրվում, նիստերը չեն արձանագրվում, ավագանու հանձնաժողովները անգործության են մատնված:

Փարաքար համայնքապետարան

Բնակչությունը ***28740***

Բնակավայրերի թիվը ***9***

Ավագանու անդամների թիվը ***21***

Համայնքի ղեկավար Դավիթ Միհասյան

2022-2023թթ. ավագանու նիստերի քանակը 33, որից 19-ը արտահերթ

2022-2023թթ. ընդունված որոշումների քանակը 470, որից 300-ը արտահերթ նիստով:

Կայանալիք նիստերի վերաբերյալ բնակչությանը չի իրազեկվում, նիստերը տեսագրվում են, նիստերը չեն արձանագրվում, ավագանու հանձնաժողովները անգործության են մատնված:

Արաքս համայնքապետարան

Բնակչությունը ***80284***

Բնակավայրերի թիվը ***31***

Ավագանու անդամների թիվը ***27***

Համայնքի ղեկավար Ղազար Ղազարյան

2022-2023թթ. ավագանու նիստերի քանակը 28, որից 10-ը արտահերթ

2022-2023թթ. ընդունված որոշումների քանակը 449, որից 132-ը արտահերթ նիստով:

Կայանալիք նիստերի վերաբերյալ մեկ իրազեկում կարողացանք գտնել, նիստերը տեսագրվում են, նիստերը չեն արձանագրվում, ավագանու հանձնաժողովները անգործության են մատնված:

Բաղրամյան համայնքապետարան

Բնակչությունը ***19957***

Բնակավայրերի թիվը ***14***

Ավագանու անդամների թիվը ***21***

Համայնքի ղեկավար Շանթ Առաքելյան

2022-2023թթ. ավագանու նիստերի քանակը 23, որից 10-ը արտահերթ

2022-2023թթ. ընդունված որոշումների քանակը 289, որից 121-ը արտահերթ նիստով:

Կայանալիք նիստերի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվում, նիստերը չեն տեսագրվում, չեն արձանագրվում, ավագանու հանձնաժողովները անգործության են մատնված: